ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-66/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2016թ. թիվ 1/73-3/12530-16, 13.05.2016թ. թիվ 1/73-3/14133-16 և 04.05.2016թ. թիվ 1/73-3/13516-16 գրություններով ներկայացված «Էլբատ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 02242108) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-66/16 բողոք) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Էլբատ» ՓԲԸ-ի 18.05.2016թ. թիվ 78, 24.05.2016թ. թիվ 84, 30.09.2016թ. և 07.10.2016թ. գրությունները, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 14.04.2016թ. թիվ ԴՎԱ/958, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 18.04.2016թ. թիվ 20/192 և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 14.04.2016թ. թիվ ԵԱ133-ԵԼ գրությունների հիման վրա, 20.04.2016թ. թիվ 1/73-3/12530-16, 13.05.2016թ. թիվ 1/73-3/14133-16 և 04.05.2016թ. թիվ 1/73-3/13516-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով

ուսումնասիրել «Էլբատ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Նախարարությունը վերոհիշյալ գրություններին կից Կենտրոնին ներկայացրել է նաև բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

2. «Էլբատ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 25.04.2016թ. թիվ 01/04.1/1641-16, 17.05.2016թ. թիվ 01/04.1/1922-16 և 05.05.2016թ. թիվ 01/04.1/1778-16 գրություններով դիմել է «Էլբատ» ՓԲԸ-ին:

«Էլբատ» ՓԲԸ-ն, ի պատասխան Կենտրոնի 25.04.2016թ. թիվ 01/04.1/1641-16 գրության, 02.05.2016թ. թիվ 68 գրությամբ հայտնել է, որ թեև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջին չի բավարարում, քանի որ պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվապահական արժեքը, սակայն Ընկերությունը հնարավորություն ունի կատարելու գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, քանի որ Ընկերության իրացման տարեկան շրջանառությունը հասնում է մոտավորապես մեկ մլրդ. դրամի, որի մեջ գնումների գործընթացի շրջանակներում հայտերի գումարն էական մաս չի կազմում:

«Էլբատ» ՓԲԸ-ն, ի պատասխան Կենտրոնի 05.05.2016թ. թիվ 01/04.1/1778-16 գրության, 18.05.2016թ. թիվ 78 գրությամբ հայտնել է վերը նշված դիրքորոշումը:

Ընկերությունը 30.09.2016թ. գրությամբ Կենտրոնից խնդրել է տրամադրել ժամանակ՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՔԵԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի շրջանակներում «Էլբատ» ՓԲԸ-ին վերաբերող հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու համար:

«Էլբատ» ՓԲԸ-ն 07.10.2016թ. գրությամբ հայտնել է, որ 2015թ.-ի վերաբերյալ տարեկան հաշվետվությունն Ընկերության կողմից ներկայացվել է 2016թ. ապրիլի 5-ին, ինչն էլ բացառում է ներկայացված տվյալների կեղծ որակելը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 14.04.2016թ. թիվ ԴՎԱ/958 գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությանը հարցում է ներկայացվել «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ, ի պատասխան որի Նախարարությունը տվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, ինչի արդյունքում «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 18.04.2016թ. թիվ 20/192 գրությամբ Նախարարությանն է տրամադրել «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

5. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 14.04.2016թ. թիվ ԵԱ133-ԵԼ գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության, «ԵՔԵԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Էլբատ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

6. ՍՑ-ԳԲԽ-66/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2016թ. թիվ 1/73-3/12530-16, 13.05.2016թ. թիվ 1/73-3/14133-16 և 04.05.2016թ. թիվ 1/73-3/13516-16 գրություններով ներկայացված «Էլբատ» ՓԲԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ 1)

• Ընթացակարգ 1-ի թվով 8 չափաբաժիններին մասնակցելու նպատակով ***01.03.2016թ.*** հայտ է ներկայացրել նաև «Էլբատ» ՓԲԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• Պատվիրատու 1-ը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ ***7.937.289.189 ՀՀ դրամ***, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է ***7.648.440.489 ՀՀ դրամ***:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 11.04.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1.1 կետով հիմք ընդունելով Նախարարության

կողմից տրված եզրակացությունը, համաձայն որի՝ «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքին, որոշել մերժել Ընկերության հայտը:

2. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ 2)

• Ընթացակարգ 2-ի թվով 4 չափաբաժիններին մասնակցելու նպատակով ***01.04.2016թ.*** հայտ է ներկայացրել նաև «Էլբատ» ՓԲԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• Պատվիրատու 2-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է ***7.937.289.189 ՀՀ դրամ***, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է ***7.648.440.489 ՀՀ դրամ***:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 18.04.2016թ. ժամը 11:15-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով որոշել է մերժել «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը՝ հիմք ընդունելով Նախարարության կողմից տրված վերը նշված եզրակացությունը:

3. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՔԵԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ 3)

• Ընթացակարգ 3-ի թվով 3 չափաբաժիններին մասնակցելու նպատակով ***02.04.2016թ.*** հայտ է ներկայացրել նաև «Էլբատ» ՓԲԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

• Պատվիրատու 3-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 3-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Էլբատ» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ ***7.937.289.189 ՀՀ դրամ***, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է ***7.648.440.489 ՀՀ դրամ***:

• Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Նախարարության կողմից տրված եզրակցությունը, 11.04.2016թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության «բ» կետով որոշել է մերժել Ընկերության հայտը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝***

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ***կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Այսպիսով, «Էլբատ» ՓԲԸ-ն Ընթացակարգ 1-ին, Ընթացակարգ 2-ին և Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտերի N 3.3 և N 3.4 հավելվածների ֆինանսական միջոցների մասին հայտարարությունների «բ» կետով ***հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:***

Պատվիրատու 1-ը, 2-ը և 3-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցումներով խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան Նախարարության կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ «Էլբատ» ՓԲԸ-ի հայտերը ներկայացնելուն ***(01.03.2016թ., 01.04.2016թ. և 02.04.2016թ.)*** նախորդող հաշվետու տարվա ***(2015թ.)*** ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ ***7.937.289.189 ՀՀ դրամ***, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է ***7.648.440.489 ՀՀ դրամ***:

Այսինքն, Ընկերության հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ «Էլբատ» ՓԲԸ-ի կողմից վերը նշված Ընթացակարգերին մասնակցության հայտերի N 3.3 և N 3.4 հավելվածներով ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում են գնման գործընթացի շրջանակում ներկայացված կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Էլբատ» ՓԲԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Էլբատ» ՓԲԸ-ի վերաբերյալ առկա են Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***01.03.2016թ.*** մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգին ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***01.04.2016թ., 02.04.2016թ. կրկին հայտեր է ներկայացրել*** համապատասխանաբար ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6» և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՔԵԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-2» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու համար, որոնց շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ինչը հիմք է Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.04.2016թ. թիվ 1/73-3/12530-16, 13.05.2016թ. թիվ 1/73-3/14133-16 և 04.05.2016թ. թիվ 1/73-3/13516-16 գրություններով ներկայացված «Էլբատ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02242108) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Պողոսյան Լիդիա**